

ՅՈՒՑԱԿ ԹԵԼԱԴՐՈՒԹԵԱՆՑ

Հ.Բ.Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՊԱՀՊԱՆՄԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1.— Մասնապէսի մը ձեռքով պատրաստել տալ Հայաստանի քարտէս մը, զայն իր այժմեան Հանրապետութեան՝ ինչպէս եւ պատմական սահմաններուն մէջ ներկայացնող, եւ տաճարային հրապարակութեամբ մը լայնօրէն տարածել զայն ապրիլային հաստատութեանց եւ հայ ընտանիքներու մէջ:

2.— Հայ ժողովուրդին մէջ ընտանիքի դաստիարակութեան աւանդական յարգանքը պահպանելու եւ պահպանելու նպատակով ձեռնարկներ ընել տունտնային դպրոցներ, ընդհանրացնելու, այս առթիւ նորակ եղած քարոզութիւնը կատարելով «Միութիւն»-ի, Բարեկրօնականների միւս օրկաններուն եւ հայ մամուլի միջոցաւ: Նպատակաւորաբար կը գտնենք որ բոլոր այն ընտանիքները որոնք տունտնային ունին, արդէն՝ անոնց մէջ մէկ օրինակը գրկեն տեղական Մասնաժողովներուն, իսկ չունենցողներն ալ փութեան պատրաստել եւ արգելալ մէջ մէկ օրինակ նոյն Մասնաժողովներուն փութանցնել: Գեղարտական Վարչութիւնը եթէ այդ պատճէնները իր գրասենեակին մէջ համարմը, անոնք կրնան ունէլ առնել վաւարարական արժէք մը ունենալ:

3.— Որպէսզի նոր սերունդը աւելի գիտակցաբար յարգէ եւ սիրէ իր ցեղը, Բարեկրօնականի Մասնաշաքիին մէջ մասնաւոր տեղ մը տալ հայ ապրիլի պատմական դերը եւ քաղաքակրթական արժէքները ներկայացնող խնամաւ զործերու: պատրաստել տալով զանոնք ձեռնհաս անձերու կողմէ: Նպատակաւորաբար կը գտնենք որ այդ զործները ընդգրկեն հետեւեալ նիւթերը:— 1.— Հայ հանձնարի ապացուցումները՝ իր ճարտարապետութեան, մանրանկարչութեան, բանաստեղծութեան ինքնատիպ գեղեցիկութիւններուն մէջ, ինչպէս նաեւ մեր եւ նախնեաց հետազոտութիւնները կամ աշխատութիւնները փիլիսոփայական, իրաւաբանական եւ գիտական մարդիկուն մէջ: 2.— Հայ ցեղին գերը՝ Արեւելքի մէջ իրրեւ տարածող յունա-լատինական մշակութիւն, ինչպէս եւ քը-

րիստոնէական քաղաքակրթութեան: 3.— Հայ մեծ դէմքեր որոնք կրնան քաղաքակրթութեան ունէլ ազդի պատմական անձնաւորութիւններուն հետ, ինչպէս Արտաշէս Մեծ, Հիմնադիր Արտաշէսեան հաստատութեան, Մեծն Տիգրան, Տրդատ, Գր. Լուսաւորիչ, Վոսադապետ թաղաւոր, Մահալ եւ Մեարոզ, Վարդան եւ Վահան, Լեւոն Մեծադործ, ևն: 4.— Հայ մեծ դէմքեր օտար երկրներուն մէջ, ինչպէս՝ Բելգիական Կայսրեր, Լօրէն Մեմլեքօֆ, Նուպար Փաշա, ևն:—

4.— Հայ լեզուի պահպանում: 1.— Ընտանիքներուն մէջ ամէն միջոցներով պարտաւորել զարմանելով հայերէնի զորածութիւնը: 2.— Եւր վարժարաններուն եւ հայերէնի դասընթացներուն հաստատում մը աւելի վարժերուն մէջ ուր գեղեցիկութիւն չունին անոնք:

5.— Մրցանակներուն հաստատում զաղութեան հայ վարժարաններուն մէջ՝ հայ լեզուի եւ ազգ. պատմութեան համար:

6.— Նուպարեան հիմնադրամով այսուհետեւ միմիայն պատրաստել ուսուցիչներ, ապ. զործիչներ, գիտուններ եւ արուեստագէտներ, եւ ոչ թէ միայն Պիճիքայի, այլ եւ ուրիշ մեծ մայրաքաղաքներուն, մասնաւորաբար Փարիզի համալսարանին մէջ:

7.— Մէկ քանի օտար պահել Սէվրի Մուրատեան վարժարանին մէջ, իւրաքանչիւրին համար բարեբար մը գտնելով կամ խումբ մը բարեբար ապրիլներուն օգնութիւնն ապահովելով, եւ ընտրելով այնպիսի տղաք որ ապագային ուսուցչական, փութականտեսական, դրական կամ գիտական ասպարէզին նուիրուին:

8.— Լիբանանի մէջ հայ աղջկանց երկրորդական վարժարան մը հիմնել, Դարուսի Յակոբեան հիմնադրամի եկամուտներով կամ ջանալով դրուները նոր բարեբար մը որ այդ նպատակին գոտար մը յատկացնէ:

9.— Սէվրի էքը Նորմալ Միւսիթիթիօրին կամ նմանօրինակ վարժարանի մը մէջ պահել քանի մը

ուսուցչուհիներ որոնք պատրաստուին իբր մասնագետ ուսուցչուհի՝ Լիբանանի եւ Սուրիոյ հայ դպրոցներուն համար:

10.— Զեւոնարիներ՝ տոմարային հին աւանդութեանց, նկարագրող օտլորութեանց եւ հայկական բնիկ տարազներու պահպանման համար (ինչպէս Վարդապետի, Վիճակի, Տէրնոտաի, Զատիի եւ Մնուշիի նիժման, Կաղանդի, հայկական հարսնիքի տոլովորդական տօնաւաճառութիւնները):

11.— Զանգեր՝ հաւաքելու եւ հրատարակելու համար աղագրական ուսումնասիրութիւններ՝ մասնաւորապէս Թրքահայաստանի զանազան դասններու աւանդութեանց, սովորութեանց, բարբարոի, ժողովրդական երգերու, ենթի մասին:

12.— Հաստատում գրական մրցանակի մը՝ օտարացման վտանգին դէմ պայքարող տարագիր Հայութեան կացութիւնը եւ հողերանութիւնը ներկայացնող լաւագոյն վէպին կամ միպիկին համար:

13.— Հաստատում երկրորդ մրցանակի մը՝ մեր հին կամ ժամանակակից պատմութեանն քաղուած եւ գրական ինքնատիպ արժէք ներկայացնող Թատրական դրօժի մը համար:

14.— Կարելի ամէն միջոցներով ժողովուրդին մէջ ամրագործել յարգանքը Հայ Եկեղեցիին հանդէպ, որ դարերէ ի վեր մեծագոյն ուժը եղած է մեր ազգային գոյութիւնը պահպանող, եւ Թելադրել որ Հայ եկեղեցականները շինել քաղաքներով լաւագոյն եղանակով կատարեն աղագրական մասն գործիչի իրենց դերը:

15.— Ծանկալի է որ Բարեգործականի Կեդր. Վարչութիւնը խորհրդակցութիւններ կատարէ Հայ Եկեղեցւոյ արտասահանան երազողոյն իշխանութեանց հետ՝ հայ նահատակաց օրը եկեղեցիի հովանաւորութեան տակ տօնելու համար մեծագոյն հանգիստաւորութեամբ եւ ազգային բոլոր հոսանքներու միացեալ մասնակցութեամբ:

16.— Վերահաստատել նեղութեան մէջ գտնուող վաստակաւոր մտաւորականներու կամ յուսատու տաղանդաւոր երիտասարդ ու չքաւոր մտաւորականներու օգնող ծօնար, զոր Պօղոս Նուպար Փաշայի աւանդարկով Բարեգործականի Վարչութիւնը աւանդով հաստատած էր եւ որ մեծ ծառայութիւններ մատոյց (ինչքան ալ այդ նպատակին յատկացուած տարեկան գումարը համեմատ ըլլար) եւ Բարեգործականի ժողովրդականութիւնը տա-

րածող ձեռնարկ մը եղաւ:

17.— Տարագիր Հայութեան բազմամարդ կեդրոններուն մէջ, մէյմէկ ներկայանալի երգչախումբ եւ Թատերախումբ ունենալ, Թելադրելով ու ձեռնարկներ կատարելով որ, եթէ արդէն մէկէ աւելի Թիւրք գոյութիւն ունին այդ երգչախումբներն ու Թատերախումբները, իբարու միացուին անոնք, եւ միացեալ խումբներուն հետգհետէ աւելի կատարելազորմանին օժանդակել նիւթական եւ բարոյական աջակցութիւններով:

18.— Սփեւքի Հայութեան ընդհանուր՝ մէկ վիճակագրութիւնը պատրաստել, սկսելով Ֆրանսայէն, եւ այդ առթիւ դիմելով Առաջնորդարաններու, Միութեան Մասնաժողովներուն, զանազան Օֆիսներու եւ մասնագետ անհատներու: Այս վիճակագրութեան մէջ շահեկան պիտի ըլլար մէկ ցուցակը ունենալ օտար վարժարաններու եւ համալսարաններու մէջ ուսանող Հայ երիտասարդներու, ձեռնարկներ ընելու համար զանոնք մօտ պահելու մեր ազգային կենսքին, որպէսզի իբրեւ պատրաստուած ուժեր մօտաւոր ապագայի մը մէջ անոնք իրենց մասնակցութիւնը բերեն մեր համայնական գործերուն:

19.— Մեր ազգային անցեալն ու մեր մշակութիւնը մեզ հիւրընկալող ժողովուրդներուն ծանօթացնելու նպատակով, օտար լեզուներով դասախօսութիւններ կազմակերպել կրեւոր կեդրոններու մէջ: Կարելի է, օրինակ, Սորպոնի մէջ կատարել նման դասախօսութեանց շարք մը եւ խօսք առնելու հրաւիրել Պ. Պ. Ծարլ Տիւլ, Կապրիէլ Միլէ, Ամէտէ Կառթիէ, Ֆէյտի, Փէն Մառէս, Ն. Ա. Ղոնց, Ա. Զօպանեան, Լ. Կ. Կէրտան, Տէրան Վարդ., Հ. Ս. Տէր Մովսէսեան, Ա. Սաղաքեան, Հայ բժշկութեան մասին՝ Տօքթ. Վ. Թորգոմեան, Կ. Բասմաշեան, Հայ իրաւաբանութեան մասին Ա. Ծիւմպիւշեան, ենթ. նաեւ: Նման դասախօսութեանց շարքը ունենալ նաեւ Հարթքէնով, Փարիզ՝ Նուպարեան Մատենադարանին մէջ, եւ այլուր՝ նպատակալարմար սրահներու մէջ:

20.— Բարեկրթութեան պակասը ընդհանրապէս զգալի ըլլալով մեր մէջ, դպրոցէն սկսեալ զայն դարմանելու նպատակով նախարկթարաններու յատուկ յարմար դասագիրք մը պատրաստել:

Ի դիմաց Հ. Բ. Ը. Միտքեւեան

ԱԶԳԱՊԱԿԱՊԱՏԱՆ ԵՄԵՆԱՊԱՌՈՂՈՂԻ
Փարիզ, 26 Յունիս 1939